

ՍՓՅՈՒՌՔԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամենայն Հայոց Հայրապետի և Հոգևոր ճեմարանի անունով ստացվել է արևմտահայ գրող Լևոն Մեսրոպի նոր վեպը՝ «Նախարարող լեռը և ներգաղթող ձին» խորագրով, որը լույս է տեսել Փարիզում, անցյալ տարի՝ Վեպը նվիրված է մեծ Ստալինի ծննդյան յոթանասուներորդ տարեդարձին։ Այս առթիվ հեղինակը, տիտղոսաթերթից հետո, տեղավորել է հետևյալ ձևերը։ «Եր ծնեղյան յոթանասուներորդ տարեդարձին առթիվ, Հայրենիքիս պատարագը ՄԻՈՒ ՍՏԱԼԻՆԻՆ կնվիրեմ այս աշխատությունս խիստ ճիացունավ և անսանձանք երախտագիտությամբ։ Լևոն Մեսրոպ»։

Վեպն ունի «Նախարան», որն անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ։

«Երախտն կյանքիս մեջ տարվեցողով փայփայելի եմ մեծ փառասիրություն մը. գրել, գրեն մեկ պատմվածք, հոգ չէ՝ գոնե մեկ էջ, որ ներշնչված ըլլա մեր հայրենի լեռնաշխարհին և հայ ժողովուրդին հարազատ կյանքին»։

Անկարելի երազ, բանի որ չէի տեսած, չէի ճանչցած, ոչ մեկը, ոչ մյուսը։

Եկավ պատերազմն իր անսխալ թաց զարհուրանքով, բայց նաև՝ հաղթությունը, մեր ազգային պատմության մեջ անսխալ թաց մեկ կրեությունով։

Ներգաղթ...

Պատերազմը հաղթվեց ինքնազատ, ներգաղթող կարավանները ծայր տվին աշխարհի յոթը ժողովուրդն վրա տարտղնված, ապրելու ամեն հույսն զուրկ հայ գաղթներուն։

Այդ օրերում, Բեյրութ հրատարակվող ֆրանսերեն թերթ մը լուրերու բաժնին մեջ կհաղորդեի թե իր հայրենուն երկիրը պիտի վերադառնա Սյուլեյման Հարրարի անուն երիտասարդ մը։

Սյուլեյմանը, Միջագետք տարագրված հայու զավակ, փոքր տարիքին կորսնցրվի բնակիչ շեյխի մը կողմն և կմեծնա անտեղյակ իր հայության, մինչև այն օրը, երբ շեյխը կմեռնի։

Այս լուրը, որուն կցված էին մեկ քանի մանրամասնություններ ալ, երկարորեն մտածել տվավ և վերջապես խանդավառեց զիս։ Որոշեցի Սյուլեյման Հարրարին վեպի մը գլխավոր դեմքը դարձնել և սկսա ծրագրել մշակել մտքիս մեջ։ Պիտի փոխեի հերոսին անունը, զարգացնեի դեպքը և ավելցնեի տարագրյալ հայերու

կյանքին առնված պատկերներ, առանց, սակայն, դիպչելու բուն իրականության որ ինքնին ապրված վեպ էր։ Գործողությունը պիտի վերջանար Բեյրութի բարափին վրա, ուր հայ բնակիչը շոգենավ պիտի նստեր ուրիշ ներգաղթողներու հետ։

Ժիշտ այդ միջոցին, Հայաստանի Սովետական Գրողներու Բ. Համագումարին հրավեր ստացաւ Անսպասելի բախտավորություն, որ տարիներու երազս կերականացնեի։

Երկու ամսեն ավելի մնացի երևան Տեսա մեր շորս հազարամյա Հայրենիքը, մեր խրոխտ լեռները, մեր նախահայրերուն դարավոր ձեռակերտները, մեր երկրին մեջ կատարված աշխատանքն ու շարունակվող վերելքը և հայ ժողովուրդը իր հարազատ դիմագծով։

Պետհրատը ցանկություն հայտնեց, որ մեր Հայրենիքին նվիրված վեպ մը գրեմ։ Վերադարձա Փարիզ և սկսա գրել այս վեպը բոլորովին նոր ծրագրով և նոր ներշնչումով։

Ջեմ կրնա մոռնալ որ կյանքիս մեծ նպատակին հասա շնորհիվ սովետական ժողովուրդներու անհաշիվ զոհողությամբ ձեռք բերված հաղթանակին։

Երախտագիտության ոլորտը ունիմ ուս մեծհոգի և քաջարի ժողովուրդին, որ իմ փոքրիկ Հայրենիքս պաշտպանեց։

Երախտագիտություն՝ հաղթանակը դարձնող և խաղաղության առաջնորդ Մեծ Ստալինին որ փրկեց հայ ազգը ստույգ և ահավոր աղետից մը։

Շնորհակալ եմ Սովետական Հայաստանի պետական վարիչներուն, Սովետական Գրողներու Միության, Արտասահմանի հետ Կ. Կապի Ընկերության, արվեստագետներու, պատերազմին վերադարձած ռազմիկներու, Միության Հերոսներու և Արարատյան դաշտի գյուղացիության, որոնք ամեն դժուրություն ընծայեցին ուսումնասիրելու և հավաքելու համար այս վեպին նյութերը։

Լ. Մ.

Փարիզ, Սեպտ. 1949 թ.:

Դիրքը տպագրված է լավորակ թղթի վրա։ Բաղկացած է 394 էջերից։ Վերջում կցված է հեղինակի լույս տեսած և անտիպ երկերի ցանկը։ Դրին է 550 ֆրանկ։

